ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

10098087

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ minister@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 002, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

**07/11-1/19955-16 08.08.2016թ.**

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ջավադյան

Ուսումնասիրելով Ձեր 19.07.2016թ. թիվ 15.1-07/000574-16 գրությամբ ներկայացված «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը՝ հայտնում ենք, որ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Միաժամանակ կից ներկայացնում ենք նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

**Հարգանքով՝**

**ժամանակավոր պաշտոնակատար**

**ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ**

*Կատարող՝ իրավաբանական վարչություն*
*Հեռ. 011 800 217*

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

Նախագծերով, մասնավորապես, առաջարկվում է՝

1) սահմանել, որ ՀՀ Կենտրոնական բանկը կարող է սահմանել հիմնական տնտեսական նորմատիվների սահմանային հարաբերակցությունից բարձր (ցածր) սահմանված թույլատրելի շեմ (բուֆեր), որի խախտման դեպքում բանկերը կենթարկվեն չբաշխված շահույթը բաշխելու (այդ թվում՝ բաժնետոմսերը բանկի նախաձեռնությամբ հետգնելու կամ աշխատակիցներին պարգևավճարներ վճարելու) սահմանափակումների,

2) որպես համակարգային ռիսկի զսպման գործիքներ նորմատիվների ցանկում ավելացնել պարտավորության և եկամտի, պահանջի և գրավի հարաբերակցությունների առա-վելագույն չափերի սահմանման հնարավորություն,

3) սահմանել «Համակարգային նշանակություն ունեցող բանկ», «Համակարգային նշանակություն ունեցող ապահովագրական ընկերություն» հասկացություններ և վերջիններիս նկատմամբ ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվների սահմանման հնարավորություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծերի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների, պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք: